ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 329 Ա

ք.Արտաշատ

„13„ դեկտեմբեր 2023թ.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «**Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերի կանոնադրությունները հաստատելու մասին**» 1550-Լ որոշմամբ հաստատված հավելված N 2-ը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արարատի մարզում ստեղծել քաղաքացիական պաշտպանության հետևյալ ծառայությունները և նշանակել պետեր.

1) Ինժեներական ծառայություն - Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Յուրի Մարտիրոսյանին

2) Տրանսպորտային ծառայություն - Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Արմենակ Հակոբյանին

3) Կոմունալ-տեխնիկական ծառայություն - Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Արտակ Համբարձումյանին

4) Բժշկական ծառայություն - Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Սուսաննա Կտրակյանին

5) Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն - Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Սաշա Խաչատրյանին /պետի պաշտոնակատար/

6) Նյութատեխնիկական մատակարարման ծառայություն - Ֆինանսական վարչության պետ Լեռնիկ Խաչատրյանին

7) Առևտրի և սննդի ծառայություն - Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Վարդան Սաֆարյանին

8) Բնակչության հատուկ սպասարկումների ծառայություն - Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ Վարդուհի Բարսեղյանին

9) Էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն – ՀԷՑ ՓԲԸ «Արաքս» մասնաճյուղի տնօրենին

10) Հասարակական կարգի պահպանման ծառայություն – ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության պետին

2. Ուժը կորցրած ճանաչել Արարատի մարզպետի 2003 թվականի մայիսի 16-ի «Արարատի մարզում քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծելու և ծառայության պետեր նշանակելու մասին» թիվ 90 որոշումը:

3. ՔՊ ծառայությունների պետերին՝ մշակել, վերամշակել ու ճշգրտել ծառայությունների պլանները և մինչև 2023 թվականի դեկտեմբերի 10-ը ներկայացնել մարզպետի հաստատմանը: Մշակել ՔՊ ծառայությունների կանոնադրությունները և ներկայացնել մարզպետի հաստատմանը մինչև 2023 թվականի նոյեմբերի 20-ը :
4. Մարզային փրկարարական վարչության պետ Արսեն Ղուկասյանին վերապահել սույն որոշման կատարման վերահսկողությունը:
5. Սույն որոշման մասին իրազեկել մարզպետի տեղակալներին, ՔՊ ծառայությունների պետերին, մարզային փրկարարական վարչության պետին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Восстановимая подпись

X

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՐՏԱՎԱԶԴ

Подписано: NAZARETYAN ARTAVAZD 2409881092 **Ա. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ**